զի չէ այնմ իրի հմուտ։ Եւ ես տէֆտէրտարին յոյժ տանջեալ ասէ թէ Թողէ՛ք զի ես զիս սպանեմ, և ոչ թողուն, այլ հարկանեն զհացածախն՝ թէ քարշեսցէ, և նա ոչ կարէ խեղդել։ Եւ նա յոյժ տանջի յայսմանէ, աղաղակէ մեծաւ պառաչմամբ թէ Թո՛ղ տուք զի ես սպանեմ զիս. քակեալ զձեռս իւր, տայ քաշելով յերկու կողմին պարանոյին և խեղդի խեղճ̂ մահուամբ ի փառս գործակցին իւրոյ սատանայի։

Ուրբաթ օրս (9 Մարտ) վէզիրն թէպտիլ չուրջ եկ։

Եւ այգուցս Շաբաթ (10 Մարտ) թագաւորին ըն . . . տա . . . (բառերը կորուսած)։

ԺԱ–ևս Կիրակի։

Բշի (12 Մարտ). Նէվռօզ ասի ըստ բառի Տաճկաց։

Եշի (15 Մարտ) սպանեաց զՂուտաէն քէհեա Մէլէկ Ահմէտ փաշային և զՄէհէմէտ էֆէնտին։

Շաբաթս (17 Մարտ) Յոհաննու (Երուսաղէմայ հայրապետին). չուրջ գայր թէպտիլ։

ԺԸ–ևս օր Կիրակի. ի Հրեշտակապետ գնացաք մօտ առ Վարդապետն մեր։

Գշի (20 Մարտ). գարնանամուտ, և մեր Վարդապետն ի Ղալաթիա գնաց ի Սուրբ Լուսաւորիչ։

ԻԵ–ևս օր Կիրակի. Թէքիրտաղու Տէր Պօղոսն ի մեր եկաւ։

Բշի օրս (26 Մարտ) զզատին փոխեցին զմեծն և եդին ի տեղի նորա զորդի մուֆտուն այսմ։

Ապրիլ ամիս օր Կիրակի Լուսաւորչի. Մղտեսին հաց արար աղքատաց։

Բշի (2 Ապրիլ). չէհր էմինէ մանգուլ եղած ադան նեղացուց զմեզ վասն ցորենոյն, զոր տվեալ և զըստակն առեալ. այժմս ասէր թէ Ոչ առի զըստակն, և աստ և անդ տանէր. և սապիթ արարաք առաջի փաշային, և գնաց նա ամաւթալից։